ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/180 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով

բժշկական կահույքի (2 մանկապարտեզների համար) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 14.10.2025թ. ժամը 14:00-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամներ Անահիտ Հակոբյան
Ցոլակ Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լիլյա Ղասաբյան

1. **Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**
   1.1. Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. **Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**
   2.1. Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	gnumner2024@mail.ru

3. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**
   3.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
   Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**
   4.1. Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Հ/Հ	Զբաղեցրած տեղ	Մասնակիցների անվանումները	Նախահաշվային գին	Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ		Մասնակցի կարգավիճակ
				Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	
1	1	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	**214500**	**178750**	**214500**	
2	1	«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ	**431500**	**359500**	**431400**	

5. **Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**
   5.1. Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 311 հասցեում:
   Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.10.2025թ.

6. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**
   6.1. **«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ի** կողմից 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ տեխնիկական առաջադրանք 1-ը և տեխնիկական առաջադրանք 2-ը ստորագրված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
   Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. **Գնահատման գործընթացի կասեցման մասին.**
   7.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:
   Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

   7.2. Հանձնաժողովի նիստը շարունակել **«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ**-ի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:
   Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.10.2025թ.

8. **Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**
   8.1. **«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում շտկել է 6.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:
   Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. **Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**
   9.1. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից 1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«ԷԿՈ-ԴԵԿՈՐ» ՍՊԸ**-ին:

10. **Գնահատման արդյունքների մասին**
   10.1. Հաստատել **1-ին, 2-րդ չափաբաժինների** մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առանց անգործության ժամկետ սահմանելու ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
   Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_____ Անահիտ Հակոբյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Լիլյա Ղասաբյան /քարտուղար/